CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.: (37410) 561 554
Fax: (37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 6
Հեռ.՝ (37410) 561 554
Ֆաքս (37410) 565 496

0010, Ереван, Вазгена Саркисяна, 6
Тел.: (37410) 561 554
Факс: (37410) 565 496

15.04.2019թ. N 15.2-08/000992-19
05.04.2019թ-ից N [illegible]

«ԱրՄոնիտոր» հանրային վերահսկողական միավորում ՀԿ-ի
համահիմնադիր Ա. Ավետիսյանին

Հարգելի՛ պարոն Ավետիսյան

Տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից նշված հարցերի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկը մարտի 7-ին հանդես է եկել հայտարարությամբ (կից՝ հայտարարության տեքստը):

Նշենք, որ ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ու կարգավորման ներքո գործող բոլոր բանկերն ու այլ ֆինանսական կազմակերպությունները պատշաճ կերպով իրականացնում են փողերի լվացման ռիսկերին համարժեք կանխարգելիչ միջոցառումներ:

Հարգանքով

Իրավաբանական վարչության պետ Վազգեն Մնացականյան

հավելված 2

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
07.03.2019
ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և լիզինգային «Ուկիո» բանկի միջև իրականացված գործարքների վերաբերյալ

ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ու կարգավորման ներքո գործող բոլոր բանկերն ու այլ ֆինանսական կազմակերպությունները պատշաճ կերպով իրականացնում են փողերի լվացման ռիսկերին համարժեք կանխարգելիչ միջոցառումներ՝ պահպանելով ինչպես ՀՀ օրենսդրության պահանջները, այնպես էլ միջազգային պրակտիկայում ընդունված կանոնները:

Նշված ոլորտում միջազգային ստանդարտներ սահմանող Ֆինանսական միջոցառումների հանձնախումբը (ՖԱԹՖ) կիրառում է դրանց իրագործման արդյունավետության գնահատման որոշակի չափանիշներ: Հայաստանը Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից 2015 թվականին իրականացված գնահատման և 2018 թվականին ներկայացված առաջընթացի հաշվետվության արդյունքներով ՖԱԹՖ-ի մեթոդաբանության համապատասխան չափանիշով գնահատվել է որպես «արդյունավետության զգալի մակարդակ» ունեցող երկիր՝ ներկա պահի դրությամբ ընդգրկված լինելով նույն մեթոդաբանությամբ գնահատված շուրջ յոթ տասնյակ երկրների լավագույն հնգյակում: (Աղբյուրը՝ http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/4th-Round-Ratings.pdf)

«Ուկիո» բանկի գործունեության և դրա միջոցով 2000-ականներին իրականացված ֆինանսական գործարքների վերաբերյալ նշենք, որ ՀՀ կենտրոնական բանկի՝ փողերի լվացման դեմ պայքարի պատասխանատու ստորաբաժանումը ժամանակին ակտիվորեն գործակցել է իր օտարերկրյա գործընկերների հետ, այդ թվում՝ տեղեկատվության փոխանակման միջոցով, և ձեռնարկվել են տվյալ ժամանակաշրջանի օրենսդրությանը համապատասխան անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ:

Նշենք նաև, որ «Ուկիո» բանկի գործունեությունը դադարեցվել է 2013 թվականին:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:
ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն
հեռ/ֆաքս. (010) 56 37 61
էլ-փոստ. mcba@cba.am
www.cba.am

հավելված 3